# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

« 31 » « հոկտեմբերի » 2016թ.
ժամը 12$^{30}$

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | |
| Ռ.Չոբանյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի պետ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | |
| Լ.Զոհրաբյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ |
| Վ.Կիրակոսյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի առաջատար մասնագետ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | |
| Վ.Հակոբյան | ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող |

**1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ**

---------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

1.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 26-ին, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Արարատշին» ՍՊ ընկերության ներկայացրած «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

**2. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

---------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

2.1. Մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած՝ «Արարատշին» ՍՊ ընկերության կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը թղթային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել է ք.Երևան, Չարենց 46 հասցեում գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ:

**3. Հանձնաժողովը որոշեց՝**

---------------------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

3.1. Հիմք ընդունելով հանձանաժողովի անդամների գնահատման արդյունքները «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել՝ «Արարատշին» ՍՊԸ-ին:
3.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը: Սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու հաջորդող օրվանից հաշված տասը օրացուցային օր:
3.3. Հանձնաժողովի քարտուղարին՝ պայմանագրի կնքման նպատակով ««ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին առաջարկել, անգործության ժամկետի ավարտից հետո, 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**4. <u>Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:</u>**

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ռ.Չոբանյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Լ.Զոհրաբյան

____________ Վ.Կիրակոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Վ.Հակոբյան